

# ՆԱԹԱՆԱՅԻԼ ԲԵՍՔՈՎԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԱՐԾՈՒԻԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Իր պատմութեան ծանր օրերին օգնութեան ձեռք մեկնած օտար մարդասէրներին երախտագիտութեամբ յիշող հայ ժողովրդի ներկայ սերնդին անծանօթ է մնացել նրա մեծ բարեկամ Նաթանայէլ Բեսքովի անունը: Այս նշանաւոր շուէդ հասարակական գործչի համար մի քանի տասնամեակ հայկական հարցը եղել է ուշադրութեան կենտրոնում: Նորուեգիացի Փրիդիոֆ Նանսէնի եւ գերմանացի Եռհաննէս Լեփսիուսի պէս նա եւս առաջին համաշխարային պատերազմից յետոյ ձգտել է երրապական հանրութեան ուշադրութիւնը բեւեռել դէպի մեծ տէրութիւնների ձեռքին խաղալիք դարձած հայ ժողովրդի իրաւունքները: Բեսքովի հայանպաստ գործունէութիւնն առաւելապէս կապւում է 1915 թ. Մեծ Եղեռնից փրկուած որբերի եւ այրինների համախմբման, նրանց համար կեանքի եւ աշխատանքի պայմաններ ապահովելու կազմակերպման հետ:

Նաթանայէլ Բեսքովը (1865-53) եղել է Դիւրսհոլմի դպրոցի ուկտոր, աստուածաբանութեան դոկտոր, ուսուչապետ. հեղինակ է աստածաբանութեանը եւ այլ թեմաների վերաբերող 40ից աւելի գրքերի ու գրքովների: Հասարակական աշխատանքը կազմել է նրա գործունէութեան գլխաւոր մասը: Նա եղել է «Քրիստոնէական միջազգային շարժում» կազմակերպութեան խորհրդի անդամ եւ այդ միութեան Շուեդիայի մասնաճիուղի նախագահը: 1920ից սկսած Բեսքովը զբաղուել է նաեւ Հայաստանի եւ հայ ժողովրդի խնդիրներով: Հայութեանը վերաբերող նրա առաջին յօդուածը լուս է տեսել 1920ի Դեկտեմբերին, շուեդական կենտրոնական Դագենս նիուհեթէր (օրուայ նորութիւններ) թերթում, «Հայ ժողովրդի տառապանքը» վերնագրով: Հայ ժողովրդի մասին քիչ տեղեկութիւններ ունեցող շուէդ ընթերցողին Բեսքովն ընդհանուր ծանօթութիւն է տուել այդ ազգի վերաբերեալ եւ ներկայացրել առաջին աշխարհամարտի ժամանակ նրան բաժին հասած փորձութիւնները:

1921ի Փետրուարի 9-12ին Ստոկհոլմում հանդիպել են սկանտինաւուն չորս երկրների ներկայացուցիչներ, քննարկելու համար Հայաստանին օգնութիւն ցուցաբերելու հարցը: Խորհրդաժողովը որդեգրել է երկու ուղղութիւն: Առաջինը՝ ազգել սկանտինաւուն քաղաքական շրջանակների վրայ, որպէսզի պետութիւններից մէկը մանդատաւոր լինի Օսմանեան կայսրութեան կազմալուծումից յետոյ անկախացած Հայաստանի հանրապետութեան համար: Երկրորդը՝ փրկել Եղեռնի հետեւանքով մահմեղական տներում գտնուող հայ կանանց եւ երեխաներին ու նրանց համախմբող մի գաղութ հիմնել: Խորհրդա-

ժողովի ընթացքում Հայաստանին օգնելու համար բարեգործական կոմիտէներ են հիմնուել չորս սկանտինաւեան երկրներում: Շուեղական կոմիտէի անդամներ են ընտրուել Նախանայէլ Բենքովը, ուսուցչապետ Հայմար Հոլմքիսիթը Լունդ քաղաքից, եկեղեցական Հազարդ իսրերգը Մալթէօից, աստուածաբան Եռնաթան Եռլէնն Ուխսալայից, քահանաց Սամուէլ Թիսկլը Ստոկհոլմից, բանասէր Դազնի Թորիվալը Ստոկհոլմից եւ Եռն Վոքսթրիտոմը Նուրբուից: Բենքովի հաստարակած Քրիստոնէական Հանրապէն Կեանքի Միութեան Տեղեկագրում, շուեղական հայանպաստ կոմիտէն հաստարապէլ է դիմում, «Փոկել Հայաստանը» վերտառութեամբ՝ (1921 Փետրուար-Մարտի համարում) որտեղ շուէդ հասարակութեանը կոչ է արուել իրենց լուման ներդնել հայ գաղթականութեան եւ Հայաստանի փրկութեան գործում: Այնտեղ մասնաւրապէս ասուել է հետեւեալը «...Շուեղական կոմիտէն ուզում է ջերմօրէն դիմել շուէդ ժողովրդին, որ նա գործնականօրէն տեղեակ պահի հայ ժողովրդին, որ նրանք Հիւմասում ունեն բարեկամներ, որոնք մարդկային համերաշխութեամբ ցանկանում են նրանց կողքին լինել»<sup>2</sup>:

Կոմիտէի կոչն անարձագանգ չի մնացել. այդ է վկայում նոյն Տեղեկագրի, 7-9-րդ միացեալ համարում հաստարապուած նուիրատուների ցուցակը, որոնց նուիրատուութիւնների չնորհիւ 1921ի Մարտի 9ից մինչեւ Նոյեմբերի 21ն ընդհանուր հաշուով հաւաքուել է 11,294,91 շուեղական քրոն: Այդ գումարը փոխանցուել է Հայաստանի Հանրապետութեան Սովետների Գերմանական կոմիտէին<sup>3</sup>:

Նոյն թուականին շուեղական հայանպաստ կոմիտէն շուեղական հանրութեանը հավական հարցին ծանօթացներու նպատակով լրաց է ընծայել չորս գրքով, որոնցից երեքը թարգմանութիւններ են գերմաններից (Եռաննէն Լեփսիուսի՝ Մի քրիստոնեայ ժողովրդի փորձանումը, Մարտին Նիեպագէի՝ Այն ապրումները, որ ունեցել է մի գերմանացի դասախրած 1915ին ասիական թուրքիայում, եւ՝ հնչպէ՞ս տեղի ունեցաւ հայերի բռնագաղթը, իսկ չորրորդը՝ Նախանայէլ Բենքովի Մի Նահատակ ժողովուրդ 20-րդ դարում գրութիւնն է»: Այստեղ շուէդ մարդասկրն անդրադարձել է եւրոպական պետութիւնների կողքից Հայաստանին մանդաստ տալու անհրաժեշտութեանը):

Ինչպէս յարտնի է, 1920ի Սեւլի հաշտութեան պայմանագրով Օսմաննեան կամրութիւնից անջատուած իրաքը եւ Պաղեստինը որպէս մանդաստակին տարածքներ տրուել են Անդլիային, իսկ Սիրիան եւ Լիբանանը ֆրանսացին: Արեւմտեան տէրութիւններից ոչ մէկը չի ցանկացել մանդաստաւոր լինել Հայաստանի համար, եներով իր քաղաքական-տնտեսական շահերից: Այս հարցի շուրջ շուեղական խորհրդարանում մի շարք բանավէճեր են եղել միքանի պատգամաւորներ պահանջել են որ Շուեղիան իր վրայ վերցնի Հայաստանի մանդաստը: Բենքովն այս հարցի կապակցութեամբ հանդէս է եկել հրապարակային ելութներով եւ միքանի անգամ գրել մամուլում:

Մենք սկանտինաւեան ժողովուրդներս ունեցել ենք եւ ունենք այն առաւելութիւնը, որ տարբեր ձևերով կարողանանք օգնել պատերազմի զրկանքներից տուժածներին: Ոչ ոք չի ցանկանում մանդատաւոր լինել Հայաստանի համար, քանի որ,- ինչպէս ասուել է,- այստեղ չկայ նաւթ, այստեղ միայն հայեր կան»: Եւ այստեղ մենք, Սկանտինաւիայի ժողովուրդներս մի պարտականութիւն ունենք, որ մեզ է սպասում: Միջազգային համաժողովը Ժընեվում<sup>5</sup>, Հայաստանի համար մանդատաւոր գտնելու համար յատկապէս դիմեց սկանտինաւեան երկրներին: Դա մեծ պատիւ է մեզ համար.... Մենք առանձնաշնորհ ենք ստացել մեծ մասշտաբով օգնելու համար մի տառապեալ ժողովրդի պատերազմի զոհերին»<sup>6</sup>:

Շուեղիայի պետական շահերը եւս նրան թելադրել են Թուրքիայի հետ յարաքերութիւնները չվատացնելու համար մանդատ չտալ Հայաստանին: Այնժամ Բենքովն իր ողջ եռանդը կենտրոնացրել է հայ գաղթականութեան խնդիրների վրայ: Վերըիշեալ Տեղեկադիրը, որը յետագայում կոչուել է պարզապէս «Քրիստոնէական հանրային կեանք», 1920ականներին տեղ է տուել Բենքովի ստորագրութիւնը կրող տանեակ յօդուածների, որոնցում նա տուեալներ է հաղորդել հայ գաղթականների վիճակի մասին՝ կ. Պոլսում եւ Մերձաւոր Արեւելքում, եւրոպական այլ նպաստամատոց միութիւնների հայանպաստ գործունէութեան եւ դարձեալ՝ շուէդ ժողովրդի կողմից հայկական մի գաղթակացան հիմնելու մասին: Հայկական հարցը քննարկման խնդիր է երեւ 1922ի ամրանը Սոննթագբերգում Քրիստոնէական Միաւորում շարժման հանդիպման ժամանակ, որի ընթացքում Շուեղիայի կողմից առաջարկուել է հայկական հարցի մասին յատուկ գրութեամբ դիմել Ազգերի Լիգային: Սոյն գրութիւնն անդրադարձել է հայկական հարցի պատմութեանը 1878ի Բերլինի համաժողովից մինչեւ ներկայ փուլը եւ ներկայացրել ապագայ որոշակի անելիքներ՝ կապուած հայագալութի ստեղծման հետ: Սոյն յօդուածը Բենքովից բացի ստորագրել են նաեւ Քրիստոնէական շարժման խորհրդի նախագահ Հենրի Չոջքինը եւ գլխաւոր քարտուղար Օլիւըր Դրայըրը:

1923ին Դանիայում կայացած միջազգային մի համաժողովում Հայէպում հայ գաղթականների մէջ աշխատող միսիոներուհի Քարէն Եփիէն ելութ է ունեցել հայկական հարցի վերաբերեալ: Վերջինս յետագայում դրել է, որ որպէս իր ելոյթի արդինք շուեղական խմբակցութիւնը Նաթանայէլ Բենքովի ղեկավարութեամբ որոշել է իրենց ծրագրած հայագաղութի կազմակերպման փորձը ձեռնարկել հենց Սիրիայում<sup>10</sup>: Այդպէս, 1924ին Սիրիայում շուեղական կոմիտէի ջանքերով ծնունդ է արել Թէէ Արմէն հողագործական գաղութը, որտեղ եղենոնից փրկուած եւ մահմեղական գերութիւնից ազատուած հայ կանացը եւ որբեր ապահովուել են օթեւամով ու աշխատանքով Քարէն Եփիէն հոգատար հսկողութեան ներքոյ:

1924ի Մարտի 19ին, Ստոկհոլմում Բեսքովի ջանքերով կազմակերպությունը նույիրուած երեկոյ, որին մասնակցել եւ ելոյթներ են ունեցել մի շարք շուշտ ժմաւրականներ՝ արուեստաբան Եռնի Ռոսսուալ, երաժշտագէտ Հարտենելլը: Բեսքովն ինքը խօսել է հայ ազգի պատմութեան մասին, նշելով որ հայերը, հակառակ դարաւոր ստրկութեան եւ պարբերաբար կրկնուող կոտորածների, մինչեւ օրս պահել են իրենց իւրայատուկ ցեղալին գծերը եւ քրիստոնէական կրօնը, մնալով եւրոպական մշակութի առաջապահն Արեւելքում: Այդ իսկ պատճառով, ընդգծել է նաև, եւրոպացիների պարտականութիւնն է պահել այդ ժողովրդի ֆիզիկական եւ բարոյական գոյութիւնը: Եւ հայ որբերի գաղութում պէտք է նրանց հնարաւորութիւն տրուի ապրել եւ գարդանալ որպէս մարդ եւ հայ:

Նոյն 1924ին Բեսքովը հրատարակել է Սիրիացում ստեղծուած հայպաղութի մասին իր առաջին գրքովը<sup>12</sup>, որի մասին աւելի հանգամանօրէն գրել է 1925ին Սիրիա կատարած այցելութիւնից յետոյ, Պաղեստինութեւ Սիրիայում, եւ Մի շուեղական հողագործական գաղութ հայ գաղթականների համար, գրքովներում (Ստոկհոլմ, 1926-1927)<sup>13</sup>: Այստեղ հեղինակը մանրամասն խօսել է Թէլ Արմէնի, նրա ընակիչների, Քարէն Եփիկի գործունէութեան մասին՝ գրութիւններն օժտելով արժէքաւոր լուսանկարներով: 1936ին Բեսքովը հրատարակել է հայ իրականութեան վերաբերող իր վերջին գրքովը՝ Այսօր-այ հայ գաղթականները<sup>14</sup>: Սրանից յետոյ նա այլեւս հանդէս չի եկել հայութեանը նույիրուած որեւէ գրութեամբ կամ ձեռնարկով: Յիրաւի, նրա անխոնջ հայանուէր ջանքերը շօշափելի արդիւնք են տուել ի դէմս Սիրիայում հիմնուած հայպաղութի, ուստիեւ այլեւայլ աշխատանքներով բազմազբաղ գործչի տեսադաշտում հայկական հարցը դադարել է առաջնային լինելուց: Սակայն մինչեւ կեանքի վերջը Նաթանաէլ Բեսքովը հետաքրքրուել է հայ ժողովրդի վիճակով: 1997 Յունիսի 8ին, Ստոկհոլմում շուեղահայ գաղութի հնագոյն անդամներից Պետրոս Զարդարեանը մեզ տեղեկացրեց, որ ինքը 1953ին, Բեսքովի մահուան տարում հանդիպել է ծերունազարդ շուշտ ականաւոր գործիչին եւ հետո երկար զրուցել է հայ ազգի վերաբերեալ:

1996-1997ին Շուեղիա կատարած մեր գիտական գործուղման ժամանակ Ուժիսալայի համարարանի գրադարանում մենք ուսումնասիրել ենք Նաթանաէլ Բեսքովի թողօնները: 1923-1928 թուականների նրա ձեռագրերում, սեւագիր թղթերում բազմիցս լիշուել են Հայաստանը եւ հայ ժողովրդը<sup>15</sup>: Նրա միքանի անտիպ նամակներում եւս շօշափուել են հայ գաղթականների օգնութիւն ցուցաբերելու վերաբերեալ հարցեր:

Բեսքովի ֆոնդից հրապարակելու նպատակով մենք ընտրեցինք վեց նամակ, գրուած 1922-1927 թուականներին, որոնց նիւթը գերազանցապէս վերաբերում է հայութեանը: Ներկայացուած նամակներից առաջին երկուսի գրադարանային թիւն է Նաթանաէլ Բեսքովի

Փոնդ, G 21 af: 14 a, էջ 37-38, (թիւ 1 նամակը), եւ էջ 39-40 (2րդ նամակը); Միւս նամակների գրադարանացին թիւն է G 21 af: 14 էջեր 72, (թիւ 3 նամակ), 108-110 (թիւ 4ը), 120 (թիւ 5ը) եւ 121-122 (թիւ 6ը): Առաջին երկու նամակները թարգմանել ենք շուէդերէնից, միւսները՝ անգլիերէն բնագրից:

Ա<sup>16</sup>

Տիկին ինքան Նալբանդեան  
Բերքերիոտ

Դիւրսհոլմ, 18 Յունուար 1922

Սիրելի Տիկին Նալբանդեան.

Ի սրոտէ չնորհակալ եմ Դեկտեմբերի 7ին գրած ձեր նամակի համար: Անշուշտ, մենք չենք կարծում, որ մեր նուիրատուութիւնն օրիորդ եփիէի<sup>17</sup> գործունէութեանը մեծ էր, սակայն մենք ուրախ ենք, որ կարողացանք անել այդ: «Արմենիերվենէն»ը Եփիէի վերջին նամակի հետ միասին, որ դուք բարեկամաբար ուղարկել էիք Կորենհագինից, ես արդէն ստացել եմ: Այն ամէնը, ինչ լառմ ենք օրիորդ եփիէից եւ նրա մասին, այն տպաւորութիւնն է թողնում, որ նա ճիշդ մարդն է ճիշդ տեղում: Ձեր իսկ աշխատանքը ժընեւում, իհարկէ, ձեր յամառ բողոքները եւս, քիչ նշանակութիւն չեն ունեցել:

Ես հասկանում եմ ձեր վրդովմունքն անգլիական ներկայացուցչութեան վարքագծի հանդէպ եւ ձեր կարծիքն ալատեղի մասին: Ես հաճուքով կ'ուուէի օգնել ձեզ սկանդինավեան նպաստների վերաբերեալ ձեր խոստումը կատարելու գործում, միայն թէ իմանալի՝ ինեպէս է հնարաւոր այն իրականացնել Շուեդական կոմիտէի տնօրինած գումարները հաւաքւում են միմիայն հանգանակութիւնների միջոցով եւ կարող են չծառայել այդ նպատակին: Այն էլ ներկայումս, երբ կարիքը ըստ մեծ է թէ մեր իսկ երկրում եւ թէ աշխարհի այնքան շատ մասերում, եւ բաւական անլուս է ժողովրդի մէջ փորձել հետաքրքրութիւն առաջացնել Լիգայի կողմից իրականացուող քաղաքական նպատակների հանդէպ: Եթէ միայն մարդ կարողանար գտնել Մերձաւոր Արեւելքում կապեր ունեցող մի գործարար մարդու, որ ի վիճակի լինէր միանուագ մի մեծ գումար նույիրել... սակայն ես այդպիսի մէկի չեմ ճանաչում: Այդ նպակակով մի շուկալի կազմակերպումն առաջմ հնարաւոր չէ: Ես խորհրդակցել եմ տիկին Մարիքա Շթիերնսթեղթի<sup>18</sup> հետ, սակայն իմ տուած միտքը նրան քիչ կարող էր գրաւել: Բնականաբար մեր մտքում կայ այդ բանը, եթէ հնարաւոր լինի ինչոր ելք գտնել: Եթէ ձեր խոստացած ողջ գումարը հիմա անհնար է գտնել Լիգայի սահմաններում, ապա պէտք է լաղթահարել անհամբերութիւնը՝ կապուած ներկայումս կատարուելիք վճարման հետ:

Կոչի մասին առաջարկը, որ այժմ ուղարկում եմ ձեզ, հազիւ թէ ինչ-որ մեծ բան կատարի: Հասարակութեան մէջ կոչը շատ քիչ է եկամուռ բերում եւ հիմա էլ ժամանակն առանձնապէս անտեղի կարող է լինել:

Ինչպէս անձամբ ձեր, այնպէս էլ ի՞մ՝ Հայաստանի համար տարուող աշխատանքների համար նոր տարուայ լաւագոյն ցանկութիւններով Զերդ հաւատարիմ՝

[Նաթանայէլ Բեսքով.]

Բ

Դիւրսհոլ, 1 Մարտի 1922

Տիկին Ինգա Նալբանդեան

Բիրքերիոդ

Սիրելի Տիկին Նալբանդեան

Հիմա, երբ պատասխանում եմ Փետրուարի Յի ձեր նամակին եւ Փետրուարի 20ի բացիկին, մի ուժգին զգացողութիւն ունեմ, թէ որքան վատ նուիրեալ եմ ես հայկական գործերի համար: Ես չկարողացաւ նախաձեռնել շուկայ կազմակերպելու կամ ժողովրդից հանգանակութիւն հաւաքելու գործերը Մեծագոյն դժուարութիւնը կապուած է առաւել կամ պակաս օգնականների մեծ քանակի հետ, որոնք անհրաժեշտ են շուկայում: Նոյնը որոշ չափով վերաբերում է նաեւ ցերեկութիւն: Ես կարիք ունեմ թէ անձնական կապերի եւ թէ ժամանակի՝ մի այսպիսի գործի իրականացման համար: Ինչ վերաբերում է հանգանակութեանը, ապա մէկ տարի առաջ մենք մի կոչ ենք հրատարակել բոլոր թերթերում, որը շատ քիչ արդինք է տուել: Կրկին նոր կոչ տպագրելը դժուար կը լինի, թերթերը հակուած չեն ընդունել այն, միակ հնարաւորութիւնն այս դէպում կը լինի այն, եթէ կարողանանք ստանալ որեւէ բարձրաստիճան անձի համաձայնութիւնը՝ իր անունը կոչի տակ առաջինը զետեղելու: Կարծում եմ՝ իսկապէս հնարաւոր է տարուայ մէկ անգամ փորձել հանգանակութիւն կազմակերպել բոլոր եկնեցիներում, սակայն նման գործի համար հարկ է ստանալ նորին արքայական մեծութեան թուլտուութիւնը: Թերեւս անհնարին լինի ցերեկութը կազմակերպել Ստոկհոլմում: Ցուսալի եւ ապահով կը լինի, եթէ ինքներդ կարողանաք ելոյթ ունենալ՝ ձեր ունեցած սլայդների ցուցադրումով: Այն անձը որ անհրաժեշտ նախադրեալներն ունի նման գործի կազմակերպման համար՝ տիկին Մարիքա Շթիերնաթեղթն է: Կարծում եմ, որ գործն առաւել արդիւնաւէտ կը լինի, եթէ դուք գրէք հենց նրան: Անշուշտ, ես չեմ պատրաստում ինձ գործից հեռու պահել, եթէ տիկին Շթիերնաթեղթը գործն իր վրայ վերցնի՝ ես հնարաւորին չափ կ'աջակցեմ նրան:

Մեթոդը, որ ես եւ իմ միւս բարեկամներն օգտագործում ենք, զեկուցումներն են տաղբեր վալյերում։ Միւս շաբաթ Գէօթերորդում ես պիտի զեկուցեմ «Պէտք է արդեօք հայութեան բեկորներն այժմ թողնուեն բախտի քամահաճուքին» թեմակով։ Ես թերեւս պէտք է աւելացնեմ, թէ ինչն է ներկայումս ինձ դժուարացնում մի մեծ հանգանակութիւն կազմակերպել Հայաստանի համար. այն, որ բարձր ոլորտների ուշադրութիւնն այժմ ուղղուած է Ռուսաստանի կարիքների կողմը, որի պատճառով ամէն մարդ կարող է պատճառաբանել, որ մի երկրի համար արդէն հանգանակութիւնն է գնում։ Բայց մենք, բնականաբար, փորձելու ենք բոլոր ձեւերը, որ կարող են արդիւմաւետ լինել եւ ասպիսով լուսով եմ, որ առաջիկայում մի բան կը լսեմ տիկին Շթիերնսթեղթից, որից առաջ նա ձեզնից արդէն նամակ ստացած կը լինի։

Զերդ հաւատարիմ՝  
[Նաթանաչէլ Բեսքով]

գ<sup>20</sup>

Դիւրսհոլմ, 3 Յուլիսի 1922

Պրն. է. Սենթ Ջոն Քաչփուլ  
Լոնդոն

### Սիրելի Պրն. Քաչփուլ.

Շատ շնորհակարութիւն Յունիսի 22ի ձեր նամակի համար։

Պիտի խոստովանեմ, որ Հայաստանի համար տարուող մեր աշխատանքը բաւական դանդաղ է ընթանում։ Մեզ մեծապէս պակասում է մէկը, որ կարողանար իր ողջ ժամանակը կամ դրա մեծ մասը նուիրել այս գործին։ Ես ինքս այնքան գերծանրաբեռնուած եմ աշխատանքով, որ անհնարին է խօսել եւ գրել Հայաստանի մասին այնպէս, ինչպէս կուզէի անել Դրանից բացի գնալով աւելի ու աւելի է դժուարանում Շուեղիայում դրամ հաւաքելը։ Մեր բարձր դրամական ստանդարտի վիճակն աւելի լաւ չէ, քանի որ մեր արդիւնաբերութիւնը մեծ մասամբ կանգնեցուած է, եւ մենք չենք կարողանում վաճառել մեր անմշակ հումքը։ Աւելացրէք սրան թուրքական մամուլի արդիւնաւետ քարոզչութիւնը, որը կասեցնելու համար կը պահանջուի շատ աւելի զօրեղ մի կազմակերպութիւն, քան մերն է։ Ես նոր կարդացի այսօրուաց թերթերից մէկում Անկարայի մամուլի բիւրոյի յայտարարութիւնը, ըստ որի նրանք ցոյց են տուել թէ իբր այն ամէնը, ինչ հրատարակուել է վերջին ամիսներին անգլիական թերթերի կողմից թուրքերի՝ քրիստոնեաց փոքրամասնութիւնների հանդէպ եղած բռնութիւնների մասին ոչ այլ ինչ է, եթէ ոչ քաղաքական կեղծարարութիւն։

Ես տակաւին չեմ տեսել Դոկտոր Ռարդի<sup>21</sup> եւ պարոն Եռնալի հաղորդագրութիւնները, ինչի մասին Դուք գրում էք։ Շատ ուրախ կը

լինեմ, եթէ կարողանաք ինձ ուղարկել որեւէ հրատարակութիւն, որ լինեմ, նիւթ տալ՝ հերքելու համար Անկարայի բիւրոյի հրապարակումը:

Աշնանը մենք կը փորձենք կրկին մի նոր արշաւ սկսել Հաւանաբար այնժամ մենք ի վիճակի կը լինենք որեւէ նուրաբաշխում ուղարկել կոստանդնուպոլսի ձեր որբանոցին: Դուք որեւէ բան չէ՞ք ծրագրում հող գնելու եւ ախտեղի շինութիւնների համար:

Անկեղծօրէն Ձեր՝  
[Նաթանալէլ Բենքով]

Դ

Դիւրսհոլմ, 19.10.1922

Պատուելի Օլիւըր Դրայէր  
Լոնդոն

Սիրելի բարեկամ.

Շատ շնորհակալ եմ Ձեր Հոկտեմբերի 10ի նամակի համար: Ես չէի կարծում, որ դուք անտարբեր էիք Հայաստանի նկատմամբ, բայց դուք պէտք է ներէք ինձ դրա համար: Ես մտահոգուած էի, որ մի լուր ստանամ նախքան Լիգայի ասամպլիան փակուած կը լինէր:

Եթէ ես ճիշդ եմ, ձեր նամակներն ինձ հաղորդում են այն փաստը, որ մեր խնդրագիրը նոյնիսկ զրոյցի ժամանակ մէջտեղ չի բերուել՝ ո՛չ ասամբլիացում եւ ո՛չ քաղաքական յանձնաժողովում: Պիտի խոստովանեմ, որ սա ինձ մեծ հիսաթափութիւն պատճառեց: Կարծում եմ, շատ օգտակար կը լինէր, եթէ նրանք հարկադրուած լինէին ոչ միայն դէմ առ դէմ կանգնել խաղաղութեան եւ բարի կամքի այս գործնական առաջարկին, այլեւ պաշտօնական վերաբերմունք ցոյց տային դրա նկատմամբ: Պարոն Միւրէյի առաջարկը՝ փորձել փոխանցել մեր գաղափարն ասամբլիացին որպէս օգտակար եւ հնարաւոր քաղաքականութիւն՝ ինչ-որ անհատական մարմնի կողմից ձեռնարկած լինելու համար, ինձ թւում է մէկ այլ բան մեր ծրագրածից: Ցանկացած անհատ մարմին հեռու է այն հնարաւորութիւններից, ինչ ունի Ազգերի Լիգան: Ցանձնաժողովում ասուել է, որ խորհուրդն արդին ունի բաւարար քանակութեամբ ուժեր՝ ներկայացուցիչներ ուղարկելու համար անապատներ՝ չբաւարարուած փոքրամասնութեան հետ: Իհարկէ ունի: Բայց ինչու չպէտք է օգտագործել այս ուժը:

Վախենում եմ, որ Լիգայում չկան շատ մարդիկ, որոնց սիրու վրովմունքով բարախի դէպի ճնշուած փոքրամասնութիւնների հանդէս գործուած անօրինութիւնները: Ցատկապէս դէպի հայ ժողովուրդը, որը կարծես թէ շատ քիչ ունի իսկական բարեկամներ: Ես այնքան էլ համոզուած չեմ, որ պարոն Միւրէյը եւ միւսները, որ բաժանում են նրա տեսակէտերը, իրաւացի են, երբ ասում են, որ մեր

առաջարկներն աւելի շատ վերաբերում են ապագային, քան անկետաձգելի եւ հրատապ ներկային Դա շատ նման է այն բանին, որ թուրքերն ի վիճակի կը լինեն անարդիխնաւետ դարձնել ժողովրդական Ազգային ժողովը, եթէ այն վերջապէս ապահովի խաղաղութեան մասին կէտերը Սակայն գաղութի հիմնումը, ինչպէս մենք համաձայնուեցինք, պիտի իրականութիւն դառնաց, որը պէտք է կատարի իր գործը: Դա բոլորովին էլ նոյն բանը չէ մեզ համար՝ հետեւել քաղաքականերին, որոնք աւարտած են համարում իրենց գործը: Ինչ վերաբերում է մի ամսպիսի գաղութատեղի համար ճիշդ տեղին, ապա ես համաձայն չեմ այն կարծիքին, որ Կիլիկիան կարող է ամէնսալարամար վայրը լինել: Ճշմարիտ է, որ Արևելեան Անատոլիան մեծամասնութեամբ դատարկուած է հայ բնակչութիւնից նրանք սպանուել կամ տեղահան են եղել Բայց այս տարածաշրջանում նրանց հին տան տեղն է: Եւ դա նրանց համար առողջ կը տայ մեծ մասամբ առամել ապահովութիւն՝ ապրել Հայաստանի հանրապետութեան կողքին, քան ապրել հայկական փոքրիկ կղզում Կիլիկիայում՝ մահմեդական աշխարհով շրջապատուած:

Դուք ինձ հարցնում էք, թէ մեր խումբը կարո՞ղ է արդեօք այժմ հարց բարձրացնել՝ ուղարկելու գաղութատէրեր ապագայ ազգային ժողովի համար: Կարծում եմ այդ մենք չենք կարող անել: Ամբողջ գաղափարը հիմնուած է այն կանխափարկածի վրաց, որ ողջ քրիստոնէական միջազգային շարժումը պիտի կանգնի այս նախաձեռնութեան գլխին: Աւելին, տակաւին վաղ է հիմա փնտուել յարմար գաղութատեղեր, երբ որ ոչինչ չի արուել՝ նախքան խաղաղութեան մտցուելը ազգային փոքրի հարցի մէջ:

Զեր նամակում առաջարկում էր նաեւ, որ մեր շարժումը փորձի աշխատել Նանսէնի կազմակերպութեան ներքոյ եւ նրա հետ համատեղ՝ գաղթականներին ցուցաբերուող օգնութեան գործում: Թէեւ սա բոլորովին այլ աշխատանք է, քան Ազգային Լիգային մեր առաջարկածը, սակայն, անշուշտ, այն նոյն ուղղութիւնն ունի՝ հայերի հանդէպ մեր ողջ դիրքորոշման հետ մէկտեղ: Դուք կարծում էք, որ մեր Շարժումն ինչ-որ հիմնադիրներ ունի այս աշխատանքի համար: Ինչպէս դուք դիտէք, մենք այստեղ Շուեդիայում յասուվկ կոմիտէ ունենք Հայաստանի համար, որն աշխատում է օգնել նպաստամատոց աշխատանքին եւ գործն առաջ է գնում: Մենք գտում ենք, որ նախեառաջ մենք պէտք է օգնենք Օրիորդ Քարէն Եփիկի աշխատանքին Հայէպում: Նա Ազգերի Լիգայի երկու այլ անձանց հետ մէկտեղ լիազօրուած է հնարաւրութեան դէքքում ազատել մահմեդական տներում գերեվարուած աղջիկներին եւ երիտասարդ կանանց: Կիլիկեցի շատ գաղթականներ ապաստանել են նրա մօտ, եւ ես կարծում եմ, որ նա գերազանց է աշխատում: Համոզուած եմ, որ դուք կը հասկանաք իմ այն խօսքը, որ մենք չենք կարող շատ բաժին հանել մեր փոքր պաշարներից: Այժմ մենք ուղարկել ենք (յետագայում նոյնպէս կու-

ղարկենք) մի փոքր գումար նաեւ դոկտոր Լեփսիուսին<sup>23</sup>, որի մեծ աշխատանքը ծայրաբեղ տուժեց գերմանական մարդի աղետալի անկումից:

Ես խօսել եմ իմ բարեկամ Թիսէլի<sup>24</sup> հետ՝ Քեմալ փաշալին<sup>25</sup> հեռագիր ուղարկելու առաջարկով՝ իսկական հաշտութեան գործում միջնորդ հանդիսանալու համար: Մենք երկուս էլ զգում ենք, որ սա շատ փոքր հաւանականութիւն է, որ նա ուշադրութիւն կը դարձնի նման մի հաղորդագրութեանը: Նաեւ ես մտածում եմ, որ այսպիսի մի գործողութիւնը միգուցէ նուազեցնի մեր հնարաւորութիւնները՝ մի գործողութիւնը միգուցէ նուազեցնի մեր հնարաւորութիւնները՝ գաղթակայանի հիմնադրման նախագծի համար առնելու նրա համաձանութիւնը:

Մենք ուրախ ենք, որ Դուք քննարկել էք մեր առաջարկը գերմանական քարտուղարութեան մասին: Իհարկէ, մենք երբեք չենք պնդում, որ դուք պէտք է այս նիւթի շուրջ խորհրդակցէք թերլինի խմբի հետ: Գերմանական տարբեր խմբերի լամօրէն առանձնացուած լինելու պատճառով ես տարակուած եմ, թէ ինչու չաշտք է թերլինի խմբի կարծիքին մեծագուն ուշադրութիւնը չդարձուի: Ինձ թուում է, որ նրանք աւելի, քան միւսները կանգնած են հաստատում հողի վրայ:

Մի օր ինչ-որ մէկն ասաց, որ դուք եկող ձմեռ ուղեւորութիւն էք նախատեսում Սկանտինավիա: Սա ճշմարի<sup>26</sup> է: Յուսով եմ՝ զգում էք, որ Դուք ջերմօրէն կ'ընդունուէք մեր կողմից:

Եղբայրաբար Զեր՝  
[Նախանայէլ Բեսքով]

Ե<sup>26</sup>

Դիւրսհոլմ, Օգոստոսի 2, 1926

Պարոն Մարշալ Ֆոքս  
Բրումանիա, Սիրիա

Սիրելի բարեկամ,

Ես եւ կիսս սրտագին շնորհակալութիւն ենք յայտնում մեր բարութեան համար, որ Դուք մեզ անմիջապէս տեղեակ պահեցիք մեր բարեկամ Ապրահամ Սարբաֆեանի<sup>27</sup> մահուան մասին: Մենք խորապէս զգում ենք, որ դա մեծ կորուստ է նրա ժողովրդի եւ բարեկամ-ների համար: Նա մեզ հետ նոյնպէս բարեկամացաւ եւ մենք նրան լիշում ենք սիրով եւ երախտագիտութեամբ: Նրա մահը եւ Սիրիային առընչուող վատ նորութիւնները, ինչպէս նաեւ ֆրանսիական կառավարութեան դիտաւորութիւններն ինձ յանգեցրին մի նոր (անընթեռնելի), ինչ դուք ասացիք հայ ժողովրդին ի նպաստ ինսդրատու կազմակերպութեան մասին:

Ջերմագին ողջոյններով մեր երկուաից Զեզ եւ տիկին Ֆոքսին:  
Եղբայրաբար Զեր՝  
[Նախանայէլ Բեսքով]

**8.4. Թոյլ կը տա՞ք ներփակել միքանի տող տիկին Սարրաֆ-  
եանին, քանի որ ես չգիտեմ թէլութի նրա հասցէն:**

**Զ**

**Պարոն Մարշալ Ֆոքս**

**Մարտ 28, 1927ի նամակից**

Ես ձեռք եմ բերել պարոն Բարթի<sup>28</sup> գիրքը, սակայն տակաւին ժա-  
մանակ չեմ ունեցել ընթերցելու այս: Կարծում եմ՝ կը կարողանամ ա-  
նել այդ յաջորդ անգամ: Թէեւ մտավախութիւն ունեմ, որ այս գիրքը  
շատ չընթերցուի այստեղ Ականդինաւիացում: Մենք նոր ենք ստացել  
մի մեծ եւ շատ լաւ գիրք Հայաստանի մասին դանիերէն լեզուով,  
գրուած Հայաստանին նպաստամատոց դանիական կոմիտէի ղեկավա-  
րի կողմից, եւ իհարկէ, այս գիրքը լայնօրէն կը տարածուի այս  
շրջաններում, որտեղ որեւէ հետաքրքրութիւն կայ այս նիւթի  
հանդէպ:

**ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

<sup>1</sup> Natanael Beskow, "Det armeniska folkets lidande", *Dagens nyheter*, 24/12/1920.

<sup>2</sup> Rädda Armenien! "Meddelanden från förbundet för Kristet Samhällsliv" 1921, No. 2-3,  
էջ 10:

<sup>3</sup> "Meddelanden...", 1921, No. 7-9, էջ 23:

<sup>4</sup> Dr. Johannes Lepsius, *Ett kristet folks undergång*; Dr. Martin Niepage, *Vad entysk lektor i Asiatiska Turket upplevde år 1915; Hur det gick till vid Armeniernas deportation*; Natanael Beskow, *Ett martyrfolk i det tjugonde århundradet*. բոլորն էլ Svenska Kommitén för Armenien, Birkegårdens förlag, Stockholm, 1921. Այս գրութիւնները վերաբառարակուել են եւ ժամէթ Յակոբանի թարգմանութեամբ լրա են տեսել Հիւմանիակայլ տարբերքում, Ուփսալ, 1995, Բ. տարի, էջ 191-238:

<sup>5</sup> Նկատի ունի ժընելի 1920 թուականի նուեմբերի համաժողովը:

<sup>6</sup> Beskow, էջ 11:

<sup>7</sup> Sverige önskar ej mandat över Armenien, *Dagens nyheter*, 23/04/1920.

<sup>8</sup> "Meddelanden...", 1921, No 7-9, էջ 4-5; P.S. om Armenien, անդ, էջ 22; Armenien, "Kristet Samhällsliv" 1923, No 8, էջ 4-6; Armenien, անդ, 1924, No 1-2, էջ 12; Internationella försonings förbundets Armenkoloni i Tel Samen, անդ, 1924, No 10, էջ 2; Tel Armen, անդ, 1925, No 9-10, էջ 14; Den armeniska kolonisationen i Syrien, անդ, 1930, N 4-5, էջ 11:

<sup>9</sup> Skrivelse i armeniska frågan till Nationernas förbund, "Meddelanden...", 1922, No 8-9, էջ 2-4:

<sup>10</sup> Karen Jeppe, *Den armeniska kolonisationen i Eufrat-Trakten*, Stockholm, 1930, էջ 8:

<sup>11</sup> Stockholm-Tidningen 14/02/1924, նաև՝ Հայրենիք, Բոստոն, 15/05/1924:

<sup>12</sup> Natanael Beskow, *Internationella försonings förbundets Armenkoloni*, Stockholm, 1924,

- <sup>13</sup> Natanael Beskow, *I Palestina och Syrien*, Stockholm, 1926; *En svensk jordbrukskoloni för armeniska flyktingar*, Stockholm, 1927.
- <sup>14</sup> Natanael Beskow, *Armeniska flyktingarna av idag*, Stockholm, 1936.
- <sup>15</sup> *Տե՛ս՝ Ուկասալալի համարաբանի գրադարանի (Քարողնա Ռեդիվիւա), ձեռագրերի ըստին, Նաթանալի Բենքովի փոնդ, թիւ 413 D: 1, 413 D:2:*
- <sup>16</sup> Այս եւ յաջորդ նամակն ուղղուած են դամիուէի գրող հասարակական գործիչ հնգա Նալբանդեանին (ծնեալ Քոլլին, 1879-1929), որն ամուսնացած է եղել քիմիկու, Կրթական գործիչ Մարտիրոս Նալբանդեանի (1872-1916) հետ: Անդամակցել է զանիական, Հայ Բարեկամների Կոմիտէին: Դանիերէն է Թարգմանել հայ բանաստեղծների, Հրատարակել հայկական թեմաներով պատմուածքներ, որոնք թարգմանաբար լրց են տեսել նաև շուեղերէն, նորուեգերէն եւ այլ լեզուներով:
- <sup>17</sup> Քարէն Եփիէ (1876-1935) դամիացի մխիուներուէի, 1903ից աշխատել է Ուրիալի գերմանական որբանոցում, ինսանել բազմաթիւ հայ որբերի: 1920ին հաստատուել է Հայէպում, աշխատանոցներ հիմնել հայ կանանց համար, 1922-1928 թթ. մահմեդական գերութիւնից ազատել 1792 հայ մանուկների եւ կանանց: 1930ին Ստոկհոլմում շուեղերէն լրտ է տեսել նրա, Եփրատի հովտի հայագաղութը, գրքովը Բենքովը նրա գործունէութեան մասին բազմից գրել է իր յօդուածներում եւ գրքերում: Եփիէն մահացել է Հայէպում եւ թաղուել տեղի Շէլի Մաքսուդի գերեզմանատանը: Նրա անուամբ է կոչւում Հայէպի հայկական ճեմարանը:
- <sup>18</sup> Ալբանիերվենէն» (Հայէրի բարեկամներ) հայերի նպաստածառուց դամիական կոմիտէն, որ 1927-1936 թթ. Հրատարակել է համանուն պարբերական: Նամակում ակնարկուած վերաբերում է հաւանաբար մի աւելի վաղ հրատարակութեան:
- <sup>19</sup> Մարիքա Շթէլրնաթենթ շուեղուէի գրող, Հայէրի սարսափելի իրավիճակը գրքուկի հեղինակը (Ստոկհոլմ, 1917):
- <sup>20</sup> Նամակն ուղղուած է անգլիացի հասարակական գործիչ Սենթ Ջոն Քաչփուլին: Վերջինս որպէս Լորդ Մէլրոզ մարդասիրական հիմնադրամի ներկայացուցիչ 1916-1917 թթ. իր պաշտօնակցի Բաքճառզի հետ միասին որբանոց է բացել հպատիքում, ապա՝ կոստանդնուպոլում, մասնակցել որբահաւաքման աշխատանքներին:
- <sup>21</sup> Նկատի ունի Մ. Հ. Ուարդի Թոնագաղթերը Փոքր Ամիայում գիրքը (Լոնդոն, 1922):
- <sup>22</sup> Քրիստոնէական շարժման խորհրդի գլխաւոր քարտուղար Օլիւը Դրայէլին գրած այլ նամակներում եւս լիշտել է Հայաստանը: Արաքս, 1922ի Սեպտեմբերի 22ին Բենքովը Դրայէրին ուղած նամակում լիշտել է, որ ճերիխակ ուղարկում եմ ֆրանսերէն եւ անգլիակն գրութիւններ Հայաստանի մասին (Ուկսալալի համալսարանի գրադարան, Նաթանալի Բենքովի արխիւ, G 21af:14, էջ 106): Մէկ այլ նամակում նա խորհրդ է Դրայէրին տեղեակ պահել իրեն հայկական գործերի մասին (անդ, էջ 107): Վերջին նամակին էլ յաջորդել է հրապարակուող նամակը:
- <sup>23</sup> Եռհաննէ Լեփսիուս (1858-1926) գերմանացի հոգեւորական, հասարակական գործիչ, հայկական հարցի վերաբերեալ միջամի գրքի հեղինակ:
- <sup>24</sup> Սամուէլ Թիսէլ, շուէդ հոգեւորական, Հայաստանին նպաստամատուց շուեղական կոմիտէի անդամ:

<sup>25</sup> Քեմալ փաշա (Մուստաֆա Քեմալ Աթաթիւրք, 1881-1938), թուրքական հանրապետութեան հիմնադիրը և առաջին նախագահը (1923-1938):

<sup>26</sup> Այս եւ լազորդ նամակն ուղղուած է անգլիացի հասարակական գործիչ Մարշալ Ֆոքսին:

<sup>27</sup> Արքահամ Սարրաֆեան (1873-1926) հասարակական գործիչ, մեծ աշխատանք է կատարել առաջին աշխարհամարտի տարիներին Լիբանանում հաստատուած հայ գաղղթականութեան շրջաններում: Անդամակցել է Բէլլութի մի շարք հանրակին կազմակերպութիւններին: Բեսքովը նրա մասին գրել է Պաղեստինում և Ելիութեան գրքով (Ասոկհով, 1926, էջ 146-147): Սարրաֆեանի մասին տես՝ Յովհաննէս Թ. Նաճարեանի Արքահամ Թ. Սարրաֆեան» լորուածը, Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 21 Օգոստոս, 1926, թիւ 34, էջ 1202-1204:

<sup>28</sup> Նկատի ունի Զ. Բարթի Արքատի ժողովուրդը գիրքը (Լոնդոն, 1926):

<sup>29</sup> Նկատի ունի Օ. Մ. Բենեդիկտոսինի Հայաստան. մի ժողովրդի կեանքը և պայքարը հազարամեակների ընթացքում, քարտէզներով և նկարներով գիրքը (Կովենհագէն, 1925):

## NATANAYEL BESKOW'S LETTERS PERTAINING TO THE ARMENIAN REFUGEES (Summary)

ARTSVI BAKHTCHINIAN

Through the use of a number of letters by the Swedish Rector of Dursholm School, head teacher and theologian, Natanyel Beskow (1865-1953), the author brings to light the philanthropic activities of the Swedish Armenophiles between 1915 and 1923. The main objective of the latter was to persuade the Swedish government to assume the mandate of the newly independent Republic of Armenia. However, when this objective failed, these philanthropists and their Christian Popular Committees campaigned to relieve the hardships of the Armenian refugees. They raised money to save Armenian orphans, young girls and widows from the Syrian desert. They were instrumental in establishing the Tell al-Arman refugee camp, which was run by the very capable missionary, Miss Karen Jeppe. The author also highlights the steps and measures taken by these philanthropists to whip up the Swedish public opinion in support of the Armenian refugees.

